

ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐԻՉ ԱՊԱՐԱՆԵՐՅՈՒՄ «ԳԻՐՔ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

(Նեղիմակի գրած և սրացած ձեռագրերը)

Ժ.Դ.-ԺԵ. դարերի մատենագիր Մխիթարիչ Ապարաներցու (շուրջ 1345-1417 թթ.) ա-
նունը և 1410 թ. ավարտին հասցրած նրա «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց»¹-ը
հայագիտության մեջ հաճախ են հիշատակվել, սակայն երբևէ հատուկ ուսումնասիրու-
յան չեն արժանացել: Նախորդ հետազոտողների տեղեկություններից հայտնի է, որ նա
«ամս յիսուն դեգերեալ էր ընթերցմունս հին մատենից գրութեան մախնեաց մերոց»², նաև
որ՝ «գատ ի թարգմանութեանց, Հայոց յատուկ գրածներէն զանազան կողմէ եթէ մեկտեղ
բերուին՝ հազար բեռն եւ աւելի կ'ըլլան, եւ թէ միմանկ Մակուայ բերդի (կամ Ծակին) մէջ ի
Սըսոյ բերուած են յիսուն լիտր ձեռագիրք»³:

Այս հակիրճ, բայց աղբյուրագիտության համար կարևոր տեղեկությունները քաղված
են հեղինակի գրառումներից. նա իր մասին գրել է. «այժմ Ծ. (50) ամ մերձ է, որ ի դրունս
Սուրբ Գրոց դեգերեալ կամք, եւ ի հին եւ ի նոր թարգմանեալ գրեանք՝ ի յայոց ազգաց, եւ
յերկաթագիր մատենան եւ ի յայլ պատմութիւնս, եւ ի սուրբ եւ ի մախնի վարդապետաց ա-
սացուածս խուն մի վարժեալ» (Ա.10ա) և ապա՝ «իմ կուս Ծ. (50) լիտր գիրք աւելի կա միայն
ի Սըսա բերած», «զհին եւ զնոր թարգմանեալ գրեանք, զմերո եւ զայլ ամենայն կողմանց եւ
տեղեաց աշխարհիս, որ եթէ հնար էր ժողովել զամենայն ի մի վայր, անելի գոյր՝ քան զհա-
զար բեռն» (Ա.4ա), իսկ մասամբ կրկնելով՝ գրել է. «միայն ի Մակուա դղեակն Ծ. լիտր
գիրք աւելի գո ի Սըսա բերած» (Ա.319ա):

Բերված հաղորդումների հիման վրա հասկանալի է դառնում, որ Ապարաներցին հե-
տամուտ է եղել ձեռքն ընկած գրքերը ուսումնասիրելուն և օգտագործելուն, ընդ սին
նրանց մի մասը՝ երկաթագիր: Տրամաբանական է նաև ենթադրելը, որ Մխիթարիչի գրած
կամ պատվիրած (ստացած) գրքերը ևս պետք է որ քիչ չլինեին: Իր «Գիրք տրամաբանու-
թեան» գործի ինքնագիրը և նրանից արված ընդօրինակությունը չհաշվելով, աներկբայո-
րեն⁴ նրան պատկանած (իր իսկ գրած և ստացած), այլ կերպ՝ նրա ունեցած կամ ժամանա-

¹ Պահպանվել է Վենետիկի Մխիթարյանների մարենադարանին պարկանող երկու օրինակով՝ Ա. ձեռագիր
№ 334 (հեղինակի՝ երկիցս վերամշակված և լրացված ինքնագիրն է), Բ. ձեռագիր № 1663 (նախորդից արված
անկապար ընդօրինակություն): Ծարադրանքի մեջ, փակագծված, հղում ենք Ա. օրինակը՝ Էջախամարով (օրինակ՝
Ա.4ա):

² Պարմուրին Հայոց, ի սկզբանև աշխարհի մինչև ցամ Տեառն 1784... Յօրինեալ ի Հայր Միքայէլ վարդա-
պետ. Չամչեանց Կոստանդինուպոլսցոյ... Յամի Տեառն 1786, հ. Գ., ի Վենետիկ, էջ 398:

³ Հայապարում. Պարմիչք և պարմութիւնք Հայոց, Յօրինեալ եւ հասարեալ ի Ն. Ղևոնդեայ վ. Մ. Ալիշան,
Վենետիկ, 1901, հ. Ա. Պարմիչք Հայոց, էջ 123. այստեղ Ալիշանը պարզաբանել է. «Գիրքն այլ ծանր կշիռ մի իմա-
նայու է»:

⁴ Հավանական ենթադրություններով վերագրումներից ձեռնպահ ենք մնացել: Օրինակ՝ Երևանի Մաշտոցյան

կին նրա գրադարանի մաս կազմող և այսօր մեզ հասած գրքերի քանակը 11 միավոր է: Ինքնին մակաբերելի է, թե այս գրչագրերը ամփոփում են Ապարաներցու մատենագրական հետաքրքրությունների շրջանակի գեթ մեկ մասը, և անկասկած է՝ սրանք ևս աղբյուր են հանդիսացել իր գլխավոր երկի համար:

Գրչագրերի այս սակավությունը առաջին հերթին, մեր համոզմամբ, պայմանավորված է հենց Նախիջևանի Միաբանողների կարգի ճակատագրով. նրանց մի մասը շարունակեց մնալ Նախիջևանում և հարկադրյալ մահամեղականություն ընդունելով՝ ձուլվեց շրջակայքի թուրքական ցեղերին, իսկ մյուս մասը ԺԸ դարի երկրորդ կեսին Ղրիմի կամ Զմյուռնիայի ճանապարհով անցավ Եվրոպա և ժամանակի ընթացքում կրկին ապագազայնացման ենթարկվեց⁵: Մասամբ նույն կերպ եղավ նաև նրանց գրական-մշակութային ժառանգության ճակատագիրը. նրանց ստեղծած ձեռագրերի զգալի մասն անհետացավ, մանավանդ որ հայոց հիմնական զանգվածին խորթ էր իր քարոզած գաղափարներով: Լավագույն դեպքում՝ պահպանված փոքր մասը մնաց շրջակա վանքերում և հետագայում անցնելով Էջմիածին՝ այսօր Երևանի Մատենադարանում է: Միաբաններին պատկանած ձեռագրերի մյուս մասը, որ հասավ Եվրոպա, մասամբ հավաքվեց Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում⁶: Այս պատճառով էլ Մխիթարիչի գրադարանից պահպանված և մեզ հասած ձեռագրերից 5-ն այսօր Երևանում են, 4-ը՝ Վենետիկում, մեկական՝ Երուսաղեմում ու Նոր Զուղայում:

Ստորև փորձենք ժամանակագրական կարգով ներկայացնել բոլոր վերոհիշյալ ձեռագրերը՝ անհրաժեշտության դեպքում տալով որոշակի պարզաբանումներ: Նկարագրելիս բերել ենք նրանցում գոյություն ունեցող՝ մեր խնդրի համար կարևոր դիտված հիշատակարանները, չենք կրճատել օրհնաբանական և աղերսական ոչ երկար մասերը:

1.

Երևանի Մատենադարան ձեռ. Հ⁶⁹ 6920.

Պետրոս Արագունացի, Գիրք առաքինութեանց,

Ժ.Գ. դար, գրիչ՝ Ֆրա Մխիթարիչ:

178 թերթ, թուղթ, 16,3x13,5. երկպույն, բոլորգիր, 24-40 տող:

Մարենադարանի Վ⁶⁹ 1656 ձեռագիրը (Բարդղղիմոս Մարաղացի, Մեկնութիւն վնգօրէից, 1382 թ., գրիչ՝ Մխիթար) թևկուզ ռսք իր բովանդակության գրված է: անվայման Միաբանողների միջավայրում և համապարախաւում է: Ապարաներցու ժամանակին, բայց գոյություն ունեցող փաստարկները այս գործը նրան վերագրելու համար բավարար չեն:

⁵ Տն՛ս Լ. Խաչիկյան, Բոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Նովիանենս Բոնեցու գիտական գործունեությունը.- Յովհաննէս Բոնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 35. նույնը՝ Լ. Խաչիկյան, Աշխատութիւններ, հ. Բ, Երևան, 1999, էջ 348:

⁶ Վենետիկի ձեռագրացուցակում մեր մարենագրին առնչվող բոլոր ձեռագրերի, այդ թվում՝ Մխիթարիչի «Գիրք պրամարանութեան» գործի նկարագրություններում «Տնկնութիւն» հարցի դիմաց գրված է. «Ունեցած ենք 1791-ին առաջ», ինչը նշանակում է, որ ձեռագրերը հավաքվել են Արևելյան Եվրոպայի հայարևակ վայրերից: Հայրենի է նաև, որ «Տրամարանութեան» գրքի երկրորդ օրինակը 1790 թ. Նունգարիայում ձևօր է բերել Մ. Չամչյանը:

Հիշատակարանը⁷.

- 142ա կատարեցաւ գիրք Եւթն պարգեացն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերո, որ է օրհնեալ յափտեանս յափտեմից. ամէն: Զֆրա Մխիթարիչ անարժան քահանայ յիշեցէ՛ք ի Քրիստոս Յիսուս, որ բազում աշխատեցա ի գրելն վասն ժամանակիս դառնութեանն, զոր կրեցաք ի հերձուածողաց եւ ցրտութեան ձմերայնոյս. եւ օրհնակն էր դժվարայոյժ ճօտր եւ տխրալ, եւ տեղիքն՝ հրապարակածողով, եւ մեր՝ նորուսումն եւ առանց ուսուցչի: Օրհնեա՛ ինձ Տէր իմ Յիսուս Քրիստոս !!! [հ]ատ՝ զիս ի յաւարտ սմին. եղիցի, եղիցի:

Ման. Միաբանողների միջավայրում Մխիթարիչ անունը հաճախաբար էր, ու թեև այս գրիչն իրեն կոչում է քահանա (ո՛չ վարդապետ), սակայն ձեռագրի գիրը վստահաբար Ապարաներցունն է: Ուստի, նկատի ունենալով, որ այստեղ նա «նորուսումն» է «եւ առանց» երևի թե գրչության արվեստի «ուսուցչի», այս ձեռագիրը համարում ենք Մխիթար Ապարաներցու գրածներից պահպանված հնագույնը:

2.

Երևանի Մատենադարանի ձեռ. Հ^տ 3938.

Թովմա Աքլիմացի, Յաղագս տնօրհնութեանն Քրիստոսի,

ԺՂ. դար, գրիչ՝ Ֆրա Մխիթարիչ:

270 թերթ, թուղթ, 16x13. երկայուն, բոլորգիր, 34 տող⁸:

Հիշատակարանները.

- 165ա Զֆրա Մխիթարիչս յիշեցէ՛ք ի Տէր:

- 185ա Ո՛վ բարի ընթերձօղ, յիշեա՛ զնուստ զֆրա Մխիթարիչս՝ զծրող սմին, որ առաջին եմ ի մեղատրացն եւ յետին ի կարգատրացն⁹:

- 209ա Զֆրա Մխիթարիչս յիշե՛ցէ՛ք]:

Ման. Սա եւ Մխիթարիչի վաղագույն գրչություններից է՝ գրված երևի հաջորդ՝ Հ^տ 68 ձեռագրից առաջ: Իսկ այս երկուսի բովանդակության (Թովմա Աքլիմացու նույն գործը) նույնությունը կարող է պայմանավորված լինել այդ շրջանում Աքլիմացու գործի ուսումնական կամ գործածական նշանակությամբ:

⁷ Յուցակ ձեռագրաց Մաշպոցի անվան Մարենսդարանի, Հապոթ Բ. Կազմցին՝ Օ. Եգանյան, Ա. Զևյթունյան, Փ. Անթարյան. Յանկերը եւ համեմատական փոխարկները՝ Օ. Եգանյանի. Խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, սյուն 421. այսպիսի գրչության հիշարակարան է արձանագրված նաև 178ա էջում, մինչև 170ա-8բ թերթերին այլ ձևով հնարագույն ավելացված «Պարզեմ փումարին հայոց» բնագիրն է, որ հիշարակարան չունի: Նույն գրքի՝ Հապոթ Ա. Կազմցին՝ Օ. Եգանյան, Ա. Զևյթունյան, Փ. Անթարյան. Ներածությունը՝ Օ. Եգանյանի [«Մարենսդարանի ձեռագրական հավաքածունը»՝ էջ 13-214]. Խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի. Երևան, 1965 (այսուհետև՝ Յուցակ Երևանի Հմտ. Ա. և Բ.):

⁸ Յուցակ ձեռագրաց, Ա. սյուն 1114:

⁹ ԺՂ. դարի հայերեն ձեռագրերի հիշարակարաններ. Կազմցն՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950 (այսուհետև՝ ԺՂ. դ-ի հիշ-բ), Հ^տ 814, էջ 647 ունի միայն այս, ապա՝ ԺԵ. դ. նորոգող Նիկողոսի հեկոյալը՝ 105բ «Յոբուամ կարդայք, ո՛վ կարդայք, եւ բուն օգրիք, զվերջի նորոգող գրգիս՝ զմեղուցեայ Նիկողոսե յիշեցէ՛ք»։ Կա նաև նույն նորոգողի մի այլ՝ չսրված հիշարակարան՝ 5ա. «Զվերջի նորոգող գրգիս զմեղուցեայ Նիկողոսե յիշեցէ՛ք»:

3.

Երևանի Մատենադարանի ձեռ. Հ^տ 68.

Թովմա Աքրուինացի, Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի. ՊԼԲ - 1383 թ.,
Նախիջեա՞ն, գրիչ՝ ֆրա Յոհաննէս, Մատթէոս Քոնցեցի (միայն՝ 151ա-9ա),
[ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանեցի]:

276 թերթ, թուղթ, 16,3x11,5. երկայուն (միայուն՝ 144բ-5ա, 196աբ), բոլորգիր, 36-38 տող¹⁰.
Հիշատակարանները¹¹.

- 103ա Ի հայոց ՊԼ Գ. (1384) թուին Սալիթաղեցի Սարսուն մտաւ. ֆրա Տէրունակամ
խոստովանահայրն կախուեցաւ:

- 174բ Գրեցաւ թվիս ՊԼԲ. (1383) Հոկտեմբերի Ը.¹²:

- 256ա Ձֆրա Մխիթարիչս յիշեցէ՛ք ի Տէր¹³:

Ծան. Ըստ վերջին հիշատակագրոյթյամ՝ Մխիթարիչը, ամենայն հավանականու-
թյամբ, այս ձեռագրի ստացողն է:

4.

Վեներտիկի ձեռ. Հ^տ 147/1363¹⁴.

Ժողովածու մեկնութեանց. 1392 թ.,

Արտագ գա՛վառի Մակու գյուղ, գրիչ և ստացող՝ Ֆրա Մխիթարիչ Ապարանեցի:

74 էջ, թուղթ, 13,5x17. երկայուն (14x11,5. մեկը՝ 14x5,5), բոլորգիր, 34 տող: Պարունա-
կում է. Վարդան Արևելցու Երգ երգոցի մեկնութեան առաջին մասը (էջ 1-47), Ժողովումն

¹⁰ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մաքենադարանի. Նարբո Ա. Կազմեցին՝ Օ. Եգան-
յան, Ա. Զնյթունյան, Փ. Անթարյան. Խմբագրոյթյամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի. Երևան, 1984, էջ
277-82: Նոյնի՝ Նարբո Բ. Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զնյթունյան, Փ. Անթարյան, Ա. Քեռշիկըյան. Խմբագ-
րոյթյամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Ա. Զնյթունյանի. Ցանկերը՝ Վ. Դևրիկյանի, Երևան, 2004 (այ-
սուհեքն՝ Մայր ցուցակ Երևանի, Ա. և Բ.):

¹¹ Աքրուինացու երկի թարգմանութեան 1345 թ. հիշարակարանը այս ձեռագրի 276ա էջից վերցնելով րպա-
զրոված է ԺԴ. դ-ի հիշ-բ, Ն^տ 430, էջ 343-4 (նոյնը կա նաև Երևանի ձեռ. Ն^տ 104, 398ա՝ Մայր ցուցակ Երևանի,
Ա., սին 441-2): Նոյն հիշարակարանի մնկ այլ հրատարակութեան և մանրամասն քննութեան րնս՝ M. A. v. d.
Oudenrijn, Eine alte armenische Übersetzung der Tertia Pars der Theologischen Summa des Hl. Thomas von Aquin,
Einleitung nebst Texproben aus den Hss. Paris Bibl. Nat. Arm. 134, Wien Mech. 3323 Leiden Univ. Bibl. Or. 5494
und Vatikan Borg. Arm. 45., Francke verlag, Bern, 1955, p. 15-37.

¹² Ցուցակում այս ձեռագրի գրչոյթյան ժամանակ համարված է «ՊԼԲ.-ՊԼԳ. - 1383-1384 թթ.»։ Ըստ ձեռագ-
րի թերթերի կարգի 1384 թ. նախորդում է (103ա) 1383 թ. (174բ), ուսրի 1384 թ. հիշարակագրոյթյունը համարում
ենք գրչի իսկ ձեռքով հեքագայում արված գրատում: Այսինքն՝ ձեռագիրը կարող է գրված և ավարտված լինել
1383 թ.:

¹³ Տնս նաև ԺԴ. դ-ի հիշ-բ, Ն^տ 686, էջ 549-50 (29ա, 51ա, 103ա, 106ա, 179ա, 186բ էջերի հիշ-ները). գրչո-
թյան ժամանակի հիշ-ներ կան ձեռագրի նաև 33բ, 63ա, 83ա, 67ա, 110ա, 131բ, 152ա, 174բ, 276ա էջերում:

¹⁴ Վեներտիկի ձեռագրերը նշանակում ենք այսպիսի՝ կոպորակային համարներով. առաջինները ձեռագրա-
րան գոյքահամարներն են, իսկ երկրորդները՝ ցուցակի հեքթական համարները:

հասարմամբ ի սրբոյն Դիոնէսիոսէ (էջ 47-48), և [Համառօտ ծաղկաքաղ մեկնութիւն Աւետարանին Յովհաննու, հարցմամբ եւ պատասխանիք՝ գլ. Ա.-Ի.Ա.] (էջ 49-73), [Ըստ ինչ իմաստասիրական՝ էջ 74]¹⁵:

Հիշատակարանը.

- էջ 47 Յիշեցէ՛ք եւ զանարհեստ եւ զփծուն զգծողս՝ զՖրա Մխիթարիչ սոսկ անուամբ քահանայ եւ աշակերտ բանի, ի մաքրափայլ յաղօթս ձեր եւ թողութիւն հայցել մեղաց իմոց ի հեշտալոր Տեառնէն եւ ներումն սղալանացն եւ կարճոգութեան, զի շտապով գրեցի զսա ի գաւառս Արտագու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր տէր Զաքարիայի մեծի երախտատրի, եւ ըստնապետիս Մատթէոս վերակոչեցեալ, ի թվ. մարդեղութեան Տեառն ՌՅՂԲ. (1392), Յովիս Ա. (1): Արդ, որք ընթեռնոյք կամ օրինակէք՝ յիշեցէ՛ք ի մեղ-տարախիչ յաղօթս ձեր գնուաստ եւ զփան[աք] ||| (1 տող թափուած) եւ զամենայն երախտատրսն, զծնողսն մարմնատր, եւ Աստուածն իմ Յիսուս Քրիստոս առ հասարակ ողորմեացի ի յահագին գալստեանն իւրոյ՝ յիշողացոյ եւ յիշեցելոցս. եւ նմա փառք¹⁶:

5.

• Երևանի Մատենադարանի ձեռ. Հ^տ 354.

Աստուածաշունչ (ամբողջական), ԺԴ. դար: [Մակու],

գրիչ՝ Գրիգոր Ապարանեցի կամ Գաւառցի (11ա-25բ, 28ա-61բ, 64ա-82բ, 84ա-126բ, 129ա-89բ, 192ա-222բ, 224ա-70ա, 272ա-334բ, 449ա-524բ), Ղուկաս (362ա-402բ, 404ա-38բ, 440ա-7բ, 530ա-52բ, 554ա-80բ, 582բ-89ա, 596ա-648ա), ստացող՝ Ֆրա Մխիթարիչ վրդ. (1-524՝ Հին Կտարական), տէր Զաքարիա անքեպս. (525-648՝ Նոր Կտակարան)¹⁷:

¹⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մարենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Հարոբ Է., Յօրինեց Կ. Սահակ վ. ճամբնման՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1996, էջ 701-6 (այսուհետև՝ Մայր ցուցակ Վենետիկի, Է., նոյն ձևով հղելու ենք ցուցակի Ջ. Վենետիկ, 1996 և Ը. Վենետիկ, 1998 հարորները): Ըստ այս նկարագրության՝ ձեռագիրը խիստ վաղ վիճակում է՝ թերի է սկզբից և վերջից, պակասներ ունի նաև մնջւրդները:

¹⁶ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի հիշարակարաններ. Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955 (այսուհետև՝ ԺԵ. դ-ի հիշ-ք. Ա.), էջ 61: Որպես այս ձեռագրի հիշարակարան դրված է Երուսաղեմի Տ^տ 327-ի 1406 թ. հիշարակարանի մի հարված (տե՛ս ստորև), ապա ծանոթագրված է. «Ձեռագրի ընդօրինակութունը Մխիթարիչն սկսել է փարիներ առաջ: Մի այլ հիշարակագրության մեջ նա գրում է. «Յիշուցիք եւ զանարհեստ եւ զփծուն զծողս զՖրա Մխիթարիչ... ի թուականութեան մարդեղութեան փաստն ՌՅՂԲ. (1392)»: Ինչպես փաստում ենք, վերջինս արդեն Վենետիկի ձեռագրից է. այս շփոթը բխում է ըստ ամենայնի Մեսրոպ Տեր-Մովսիսյանի «Ընդհանուր ցուցակ»-ից, որից Լ. Խաչիկյանը բաղել է Վենետիկի ձեռագրերի հիշարակարանները (տե՛ս ԺԵ. դ-ի հիշ-ք. Ա. էջ ԾԶ): Այսուհետև հստակ է, որ Վենետիկի այս փոքրածավալ ձեռագիրը գրվել է ո՛չ թե 1392-1406 թթ. ընթացքում, այլ՝ 1392-ին, իսկ 1406-ին գրվել է Երուսաղեմի Տ^տ 327-ը:

¹⁷ Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց, Երևան, Բ., սյուն 227-240: Հնարագայում ձեռագիրը երկար ժամանակ եղել է Նոր Զուղայում: 1635 թ. խոջա Մարտին այն ստացել, նորոգել ու թերի մասերը լրացնել է փվի Հակոբ Գրչին (83ա և այլն): 1660 թ. խոջա Նուրվալին ստացել և վերակազմել է փվի Հովհաննեսին և Ըստրակեսին (648բ), իսկ 1677-ին պարոն Դիվանջի դուստր և Ավետուհի կին Զուղայեցի Փարսան ստացել և ընծայել է Հոհան Եպիսկոպոսին (529ա):

650 թերթ (չգրված՝ 1ա, 27ա, 83բ, 127ա, 190բ, 361բ, 649աբ), թուղթ և մագաղաթ (72, 84, 362-447, 529-648), 26,5x20. երկայուն, բոլորգիր, 45-46 տող¹⁸:

Հիշատակարանները (Մայր ցուցակից քաղելով՝ ընտրովի բերում ենք նախ Գրիգոր, ապա՝ Ղուկաս գրիչներինը, վերջում՝ ստացողներինը).

- 101ա *Ջթարմատար և զփցուն և զբազմաներկ մեղաք մակարդեալ ոգի Գրիգոր դպիր գծող յիշեսջիք ի Քրիստոս հանդերձ ծանդաք և եղբարքք և ամենայն զարմիք և երախտատրոյվք, ո՛վ աստուածաւէր պատահողք սմին, և Աստուած զձեզ յիշէ առհասարակ. ամէն. ո՛հ:*

- 189բ *Ջնուաստ ստացող սմին՝ զՖրա Մխիթարիչ վարդապետ յիշեսջիք ի Տէր կրկին ծնողօք*¹⁹ *և համայն զարմիք, ո՛վ պատահողք սմին, և Աստուած զձեզ յիշէ առհասարակ: Ընդ նմին և զփցուն գրչիկս՝ զԳրիգոր սարկաւագ, յիշել աղաչեմ ի Տէր՝ հանդերձ ամենայն ազգականօք և երախտատրօք, նաև զՅոհաննէս պատանեակս մեր, որ կու սպասատրէ մեզ (նման՝ 258ա)*²⁰:

- 252բ *Ջգծաղ սուրբ և աստուածեղէն տառիս՝ զԳրիգոր դպիր Գաւառեցիս յիշեսջիք ի տէրունիս, զի և դուք յիշեալ յիշիք ընդ Տեանն սիրելիս:*

- 265բ *Ջտտապեալ ոգի և զմեղօք լցեալ չարին, զթաղծեալ անձն Գրիգոր դպիր Գաւառեցի անարհեստ գրչակ յիշեցէք ի Տէր Յիսուս, ո՛վ պատահողք այսմ սուրբ և աստուածեղէն զանձիս. և որ առատն է ի տուրս, պարգեւեցէ մեզ՝ յիշելոցս, և ձեզ՝ յիշողացո, զիւր երկնից արքայութիւնն. ամէն: Աւա՛յս մեղատրիս:*

- 288բ *Ջթաղծեալ ոգի՝ / զԳրիգոր դպիր Գաւառեցի / և զծրող այսմ տառի / յիշեսջիք ի Տէր բարի, / ո՛վ պատահողք այսմ զանձի, / և զծնողս իմ. և Աստուած ձեզ յիշէ:*

- 501ա *Ջաշխատող սորին՝ զփցուն գրչակս զԳրիգոր մանուկ Ապարաներացի, յիշեսջիք ի Տէր Յիսուս ամենայն ազգականաւք և երախտատրաւք, ո՛վ պատահողք այսմ նշանախեծի, և որ առատն է ի տուրս բարեաց, պարգեւեցէ մեզ՝ յիշելոցս և ձեզ՝ յիշողացո առ հասարակ զիւր երկնից արքայութիւնն. ամէն:*

- 392ա (Ղուկաս գրչի) *Ջնուաստ գծող Ղուկաս յիշեա՛ ի տէր Յիսուս Քրիստոս (նման՝ 401ա, անանուն՝ 580բ, 625ա):*

- 589ա (Գրչի քերտած գրութեան վրայ, այլ ձեռքով) *Ջստացող սորին՝ զտտապեալ և զնուաստ ոգիս զՖրա Մխիթարիչս սպասատր բանի, յիշեցէ՛ք առ Քրիստոս բարի մտօք*²¹:

¹⁸ Ձեռագրի բովանդակության նկարագրության սկզբում կա հետևյալը. «Այս և հաջորդ բոլոր աստղանիշ [կրող] կյուրերը լրացված են 1635-ին նորոգող Հակոբ գրչի ձեռքով» (Մայր Ցուցակ, Բ., սյուն 228). Աստղանիշները, բնականաբար, մեր հեղինակի «Գիրք փրամարանութեան» գործի կարևորագույն աղբյուրներից է: Ոստի անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ 1635-ի լրացումներ են Հին և Նոր Կտակարանների ո՛չ բոլոր գրքերի գլուխները, նախադրությունները, առաջարանությունները, Սիրաբի գիրքը (347ա-56ա), Եսեթի Թուղթը (525ա), Համարարբառ-Կանոնը (525բ-7բ), Սրբոյն Եփրեմի ի Յուէվ՝ յոթ վահանգի (335ա-9բ) և Պատմություն Ասանթի (339բ-46բ) բնագրերը, կամ նաև՝ այն բոլոր էջերը, որոնք էջված չեն գրիչների անուններին և թերթաբանակին հաջորդող «զրված» բնորոշմամբ փակագծային թվարկումների մեջ:

¹⁹ «Կրկին ծնողօք» հավանաբար նկարի ունի մարմնավոր և հոգևոր ծնողներին:

²⁰ Գրչության արվեստի պատմության փնտանյունից ուշագրավ է հետևյալը. 205բ «Ջգծողս յիշես՛ և անկաղի՛ր յեք, զի թանաքս վայր էր և կու պիտէր. ո՛հ»:

²¹ ԾԵ. դ-ի հիշ-բ. Ա. էջ 61. Ծ. «Ֆրա Մխիթարիչը կամ Մխիթար Ապարաներցին գործել է 1360-1410 թթ. ըն-

- 641թ Ջգերահռչակեալ եւ զերջանիկ զարհիական զլուխն մեր՝ զտէր Զաքարիա՝ ստա-
ցող սուրբ կտակիս Նորոյ յիշեցէ՛ք յաղօթս. ընդ միսն եւ զնուաստ զծոդս՝ զՂուկաս եւ
զճնողսն իմ՝

Ման. Միջնադարյան հակաճատական բնույթի որևէ աշխատության հիմնական աղբ-
յուրը պետք է լիներ Աստվածաշունչը, որից արված քաղվածքներն առավել քան առատ
են մաս Մխիթարիչի «Գիրք տրամաբանութեան» գործի մեջ: Անկասկած է մաս, որ վերջի-
նիս այդ տեսակ բոլոր (ուղղակի, վերաշարադրանքով կամ հիշատակումով) քաղումներն
արված են իր իսկ պատվերով գրված այս Աստվածաշունչից, որ, ի դեպ, «Մնացորդաց
արված են իր իսկ պատվերով գրված այս Աստվածաշունչից, որ, ի դեպ, «Մնացորդաց
գրքերի» մասնական թարգմանությունը պարունակող սակավաթիվ օրինակներից մեկն
է²²: Ինչպես տեսանք, այս օրինակի մեջ կային էական արկասներ, որոնք լրացվել են 1635
թ. Արոգողի ձեռքով. օրինակ՝ սկզբնապես այստեղ չկար Մխիթարի առատորեն օգտա-
գործած Սիրաքի գիրքը (247ա-56ա): Սակայն այսպիսի դեպքերում մեր տրամադրության
տակ կարող էր լինել մաս Միաբանողների միջավայրում գրված՝ Երևանի Հ^ր 184 ամբող-
ջական Աստվածաշունչը²³:

Ձեռագրացուցակներից մեկում այս ձեռագրի գրչության վայրը նշված է «Ապարա-
նե՞ր», մյուսում՝ «[Ապարաներ]»²⁴: Այսուհանդերձ՝ համոզված ենք, որ այն գրվել է Մա-
կուում, ինչի օգտին են խոսում հետևյալ փաստարկները.

ա. Կասկածից վեր է, որ այս ձեռագրի բուն պատվիրատու-ստացողը Մխիթարիչ
Ապարաներցին է, իսկ Նոր Կտակարանի մասինը՝ «արհիական զլուխն մեր տէր Զաքա-
րիա»-ն (641թ), որ, թվում է, այդ մասի գրչության ծախսի հոգացողն է, այսինքն՝ բոլոր դեպ-
քերում ձեռագրի բուն տերը Մխիթարիչն էր: Նախիջևանի գավառի առաջնորդների ցան-
կում²⁵ 1330-1766 թթ. ամբողջ ընթացքում այս անունով որևէ եպիսկոպոս չկա, ուստի
առավել քան հավանական է, որ սա Արտազի կաթողիկ այն առաջնորդն է, որին Լ. Խա-
չիկյանը կոչել է «Զաքարիա Բ.» և որին հատկացրել է 1361-1392 թթ.²⁶: Նրա եպիսկոպո-
սության սահմանային այս թվականներից առաջինի հիմքը Մարադայում 1361-ին «ի հայ-

թացքում: Նրա կողմից գրված կամ նրա անվան հիշարակությամբ այս և մյուս հիշարակարանները փնդադրում
ենք Մխիթար գրչի կողմից 1406 թվականին Մակուում գրված հիշարակարանին առընթեր՝ նկարի ունենալով,
որ նրա մեջ Մխիթարիչը հիշարակվում է որպես գրչի ուսուցիչ-թարգմանապետ»: Այս դրված են այս Աստվա-
ծաշունչի 501ա, 252բ, 189բ, 205բ, 589ա էջերի հիշարակագրությունները:

²² ՏՆՆ Գր. Խաչաթևանց, Գիրք մնացորդաց ըստ հնագույն հայ թարգմանութեան. Զատաջինն ամ ի յոյս ըստ
կրկին ձեռագիր օրինակաց հանդերձ Բ. լուսագիր նմանարությունմբ ևնցին, Մոսկուա, փյ. Վարվառե՝ Գապ-
ցուկ, 1899, էջ Գ-Դ.: ՏՆՆ նաև **Н. Марр**, Новоткрытый армянский текст "Паралипоменон" (К вопросу о
переводах св. Писания на армянский язык).- **Н.Я. Марр**, Кавказский культурный мир и Армения,
Составитель и редактор тома **П. М. Мурадян**, Ереван, "Гандзасар" богословский центр, 1995, стр. 179-196.

²³ 1400-1401 թթ., Ապարաներ, գրիչ, կազմող՝ ֆրա Յովհաննես Ապարաներցի, սրացող՝ Խաչատուր քիյ. 376
թերթ, թուրթ, 23,2x14,5. երկայուն, բոլորգիր, 50-60 փող:

²⁴ Մայր Յուցակ, Վճուր, Ա. սյուն 305, նույն փնդում, Բ. սյուն 227:

²⁵ Միսական, փնդագրություն Միննաց աշխարհի, ի Ն. Վանդեղայ Մ. Ալիշան Մ. Մխիթարեան, Վենետիկ,
ի Մխիթարայ վանս, ի Ս. Ղազար, 1893, էջ 388 (այսուհետև՝ Միսական):

²⁶ ՏՆՆ Լ. Ս. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը.- Բանբեր Մարտնադա-
րանի, հր. 11, Երևան, 1973, էջ 158, 162, 166. նույնը փն՝ նաև Լ. Ս. Խաչիկյան, Աշխատություններ, հր. Բ.,
Երևան, 1999 էջ 74, 77, 80 (այսուհետև՝ Լ. Խաչիկյան, Արտագ, ԲՄ և Աշխ., Բ.):

րապետության աթոռակալաց առաքելոյն Թաղեոսի Տէր Տիրացոյի եւ Տէր Զաքարիայի՝ գրված Նոր Զուղայի Հ^ր 336 Աստվածաշնչի հիշատակարանն է²⁷, երկրորդինը՝ Վննետիկի Հ^ր 147 ձեռագրինը (տե՛ս վերը): Ցավոք, առկա աղբյուրների մեջ այս եպիսկոպոսի անվան այլ հիշատակություն չկա²⁸, նաև չգիտենք նրա մահվան որևէ հավանական թվական: Այսուհանդերձ, Լ. Խաչիկյանը, Տիրացու Գ. պայմանական անունով, սրա ենթադրական հաջորդն է համարել Արտազի պարոն Նուրադիհի անանուն կրտսեր որդուն և Արտազի կաթողիկ եպիսկոպոսների ցանկում այս Տիրացու Գ.-ի դիմաց նշանակել է 1404 թ.²⁹: Խաչիկյանն ասում է նաև հետևյալը. «Զաքարիա Բ. եպիսկոպոսի աթոռակալության տարիներին, մասնավորապես ԺԵ. դարի սկզբներին»³⁰:

Այս ամենը մեզ հիմք է տալիս վստահորեն պնդելու, որ Մխիթարիչ Ապարանեցու Աստվածաշունչը գրվել է Մակուում, շատ հավանորեն ԺԳ.-ԺԴ. դարերի սահմանագծում, պայմանականորեն՝ 1395 թվականի շուրջ:

բ. Հիշատակարանների մեջ Մխիթարիչը մի անգամ կոչված է «*Ֆրա Մխիթարիչ վարդապետ*» (189ա), մի անգամ էլ՝ «*Ֆրա Մխիթարիչս սպասավոր բանի*» (589բ), իսկ առաջին գրիչ Գրիգորը չորս անգամ կոչվում է «*Գաւառեցի*» (252բ, 265բ, 288բ), մի անգամ՝ «*Ապարանեացի*» (501ա): Ավելին՝ նույն Մխիթարիչը Մակուում 1406 թ. իր պատվերով գրված՝ Երուսաղեմի Հ^ր 327 ձեռագրի (մեր շարքի՝ 8) մի հիշատակարանում կոչված է «*Մխիթարիչ վարդապետ Գաւառեցի*» (էջ 112ա), մյուսում՝ «*րարունապետիս Մխիթարիչ վերակոչեցեալ*» (էջ 285ա՝ տե՛ս ստորև): Նկատելով, որ գրչին կամ որևէ անհատի իր ծննդավայրբնակավայրի անունով մականուն պետք է տրվեր ավելի հաճախ նրա՝ նույն իր բնակավայրից դուրս գտնվելու դեպքում, այստեղ հարկադրված ենք նաև Գավառ և Ապարաներ անունները փնտրելու նույն տեղում: Առկա տեղեկատուի թվարկման մեջ առաձևանում են Գավառ անունով հետևյալ բնակավայրերը՝ ներկայիս Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ(նի) քաղաքը, գյուղաքաղաք Վանի նահանգի Հիքյարի գավառում և երբեմնի գյուղ ներկայիս Մեղրիի շրջանի տարածքում³¹: Սրանցից որևէ մեկը Նախիջևանի Ապարաների հետ մերձեցնել կամ նույնանալ չի կարող, ուստի կարծում ենք, որ ըստ մեր շարադրած փաստերի՝ ԺԳ.-ԺԴ. դարերի ընթացքում Մակուում Նախիջևանի գավառը կոչում էին պարզապես Գավառ, ավելին՝ հավատացած ենք, որ սա բխում էր Միաբանողների կարգի անվան գրեթե պաշտոնական դարձած «Fratres Armeni Unitores de provincia

²⁷ Տե՛ս Ծուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ., Կազմեց՝ Լ. Գ. Միևասևան, Խմբագրութեամբ Օ. Եգանեսանի, Վիեննա, 1972, ձև. Տ^ր 23՝ էջ 32 (խաչիկյանը սա վկայակոչել է Մ. Տեր-Մովսիսյանի «Ընդհանուր ցուցակ»-ի միջոցով):

²⁸ Հմմտ. նաև Ն. Վարդան վ. Հացունի, Կարևոր խնդիրներ Հայ Եկեղեցու պարմութենեն, Վննեփիկ, 1927, էջ 310՝ «1392ին Անկարան մի գրուած հոն «ի հայրապետութեան Զարարիս» նոյն [Արքազի Թաղեոս առաքեալի] ուխտիկն:

²⁹ 1304 թ. Մակուի բերդ այցելած Ռուի Գոնեսպես դե Կլավիխոն ասում է, թե Նուրադիսը մրադիր էր իր կրթներ որդուն ուղարկելու Տոմ, որպեսզի Պապը նրան ձեռնադրի Արքազի եպիսկոպոս. փո՛ս Լ. Խաչիկյան, Արքազ, ԲՄ. 11, էջ 162, 166, Աշխ. Բ. 77, 80:

³⁰ Լ. Խաչիկյան, Արքազ, ԲՄ, էջ 159, Աշխ., Բ. էջ 74:

³¹ Թ. Խ. Հակոբյան, Մտ. Տ. Մելիք-Բախշյան, Ն. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների փղեղանունների բառարան, Չորս հատորով, հր. 1 (Ա-Դ), Երևան, 1986, էջ 798-9:

Nachvanen³² ձևից:

6.

Վենետիկի ձեռ. Հ^տ 863/1000.

Դատաստանագիրք լատինաց (Կանոնագիրք Է.):

Ժ.Դ. դար, Ապարաներ, գրիչ, ծաղկո՞ղ և ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարաներցի:

348 թերթ, թուղթ, 16,5x13. երկայուն (13x10,5. մեկը՝ 13x5), բոլորգիր³³:

Հիշատակարանները³⁴.

- 2ա (Կիսախորանի վերին հատուածում) «Ֆրա Մխիթարիչ»:

- 113բ *Ձանպիտան ֆրա Մխիթարիչս յիշեցէ՞ք ի Տէր:*

- 178բ *Զգծող սորին գիսանաք եւ զանարհեստ գրիչ զֆրա Մխիթարիչ, որ յետին եւ ի կարգն եւ առաջին ի մեղատրսն, աղայեմ զձեզ, յիշել զմեզ բարի մտօք ի յողորմութիւն Քրիստոսի, որ յիշէ զմեզ ի բարի՝ մորա մեղաց գիրն ջնջի. ամէն:*

- 179ա *Ո՛վ բարի ընթերձողք, վասն սիրոյն Քրիստոսի ամմեղադիր լերո՞ւք վասն սխալանաց գրոցս, զի ամենայն արհեստատր սխալի ի գործս իւր, եւ օրինակ գրոցս խիստ սխալ էր, եւ այլ օրինակ չկայր: Աստուած ողորմի գրողիս:*

- 190ա *Զֆրա Մխիթարիչս յիշեցէ՞ք ի Քրիստոս:*

- 216բ *Գրեցաւ գիրքս Դատաստանաց ձեռամբ փծուն գրչի, որ յորջորջի մականուն տառապեալ Մխիթարիչ Ապարաներցի, ի վայելումն ինձ եւ ծնօղաց իմոց, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: Եւ զիս ի բարի մտաց մի՛ մոռանաք. յիշողքդ յիշեալ յիջին ի կեանս յարիտենական. ամէն:*

- 217ա *Օգնեա՛ ինձ, տէր իմ Յիսուս Քրիստոս, եւ շոտով հասո՛ գիս ի յաւարտ սմին. եղիցի:*

Ման. Գլխավոր հիշատակարանը, որ վերջից թերի է, ուստի և թվական չունի, կարևոր և միակ այն վավերագիրն է, որ մանրամասներ է հաղորդում Մխիթարիչի ընտանիքի ան-

³² Նմմր. Hierarchia Catholica Medii Aevi sive summorum Pontificum, S. R. E. Cardinalium Ecclesiarum antistitum series. Ab anno 1198 uaque ad annum 1431. E documentis tabularii praesertim Vaticani collecta, digesta, edita per Conradum Eubel, S. Theol. Doct., Editio altera, 1, Monasterii (Munster), MDCCCXIII (1913), p. 354. Խախտված է, էջ 386:

³³ Մայր ցուցակ Վենետիկի, Ջ. սյուն 357-70. «Նկարած ձեռագրին արպարին բռնակները ու պարագաները, կրկանք ըսել որ ներկայ օրինակությունը կարարում է Ժ.Դ. դարու ապարին և կամ ԺԵ.ին սկիզբը»:

³⁴ Պեպրոս Արագոնացու և Հակոբ Քոնեցու ձեռքով Դարաստանագրքի թարգմանության հիշարակարանը՝ 348ար չկա Ժ.Դ. դարերի հիշարակարանների հապորում: Հ. Ս. Ճանճեյանը, նախապես ընդունելով, որ նրա մեջ «կը յիշուի գրքին թարգմանության թուականը՝ 1301, որ հաւանաբար վրիպակ ըլլայ, քանի նոյն փայտին ղեկն կազմակերպում ունիթոռները» (Մայր ցուցակ Վենետիկի, Ջ. սյուն 357), թվականը հաղորդող նրա հապավածը փակագրել է անվտիտիս. «յստի ձերնդեան Փրկչին մերո հազարներորդի երկրարխիւրներորդի առաջնորդի» (Ա. փ., սյուն 366), իսկ Մ. Ուղեկրիյը լուծումը գրել և իրավացիորեն փակագրել է անհրաժեշտ լրացումով. «հազարներորդի երկրարխիւրներորդի [երեսներորդի] առաջնորդի»։ Oudenrijn M. A. v. d., *Linguae Haicaenae Scriptoris Ordinis Praedicatorum congregationis Fratrum Unitorum et FF. Armenorum ord. S. Basili Citra mare consistentium* quotquot huc usque unitorum recensebat, Bernae, Apud A. Francke, 1960, p. 192-3:

դամների մասին: Սրա որոշ հատվածներ քաղվածաբար տպագրել է անս Ալիշանը³⁵. Արա և Հ. Ս. Ընենենյանի³⁶ ընթերցումների միջև տարբերություններ կան, ուստի և ձեռագրի պատճենով³⁷ վերընթերցելով և ճշգրտելով՝ բնագիրն այստեղ բերում ենք ամբողջությամբ.

- 348բ Արդ, գծագրեցաւ կամաւ ամենակարօղին լուսափայլ եւ հոգիաշահ մատենանս այս, որ կոչի Դատաստանաց՝ ի վանքս Ապարներք, ընդ հովանեաւ Սրբուհո Աստուածածնին եւ Սուրբ Ստեփանոս Նախապկահին եւ Սուրբ Յակոբոսի առաքել[ոյն]. եւ Ամենայն Սրբոց եւ հազարապետաց խորհրդոցն Աստուծոյ եւ սպասատրաց սոցին վե[րնոց]. Ասիս ֆրա Տէրունական փրիօրի եւ վիքարի կարգ[իս], Մխիթարիչ վարդապետի ճշմարտի³⁸, ֆրա Գրիգորի որ մականուն կոչեցեալ Մակունց[ի], Ֆրա Մովսէսի, Ֆրա Մխիթարի, ֆրա Մկրտչի, ֆրա Սիմէոնի, ֆրա Յոհաննիսի, ֆրա Զվանի, ֆրա Ղուկասի, ֆրա Յովսէսի միակեցի, Գրիգորի եւ տնտես Գրիգորի, սուրբ (?) Աստուածատուր միակեցի, III (1 տող թափուած) [գրեցաւ] ձեռամբ անաստ ոգո եւ անարհեստ գրչի ֆրա Մխիթարչի. [յետ]ին եւ ի կարգն եւ առաջին ի մեղաւորսն:

Արդ, գտնաւ զամենեսեան զվերո ասացեալս եւ զամենայն հնագանդեալս եկեղեցոյն Հոռմա արժանաւորեսցէ Աստուած Հայր երանութեանն յախտենական, եւ ծոցածինն իւր Քրիստոս ժառանգորդս արասցէ արքայութեան, եւ մասն սուրբ եւ պարգեատու Հոգին Սուրբ կերակրեսցէ զամենեսեան անմահական կերակրովն յախտեանս յախտենից. ամէն:

Ընդ սոսին եւ զմարմնաւոր ծնողսն ի[մ]. Ասիս զսիրելի հայրն իմ զԳորգիկ, որ հանգուցեալ է ի Քրիստոս, եւ աղաչեմ զձեզ, ով բարի ընթերձօղք, զի որ ոք ընթ[եռնու]՝ զխոնարհեցո Տէր զո[ւնկն] աղօթքն ասէք, Այլ եւ զաղօթքն որ յետ հաղորդ[ութեան], այսինքն՝ Արձակեա՛. եւ որ ասասցէ ըստ այսմ կերպի՝ իւր մեղաց գի[րն] ջնջի. երկրորդ՝ զմայրն իմ զԵրայիս, որ կու աշխատի. երկրորդ՝ զեղբայրն իմ զԾահն, եւ զքոյրն իմ զԹուխտէնիկ եւ զայլ ամենայն երախտաւորսն իմ, զազգականս եւ զօտարս:

Աղաչեմ զձեզ եղբայրական սիրով, զի որ ոք ընթեռնուցու զգիրքս կամ օրինակէք գտնաս, զվերո ասացեալսն յիշեսցիք յաբեմիսզն Աստուած բարի. որ ոք եւ որ յիշէ զմեզ ի բարի, Աորա մեղաց գիրն ջնջի: Փառք էին անեղի եւ Որդոյն միածնի եւ Սուրբ Հոգոյն ճշմարտի այժմ եւ միշտ եւ յախտեանս:

Արդ, եթէ սխալանք ինչ գտանիցէք ի սմա, վասն սիրոյն Քրիստոսի անմեղադիր լեռո՛ւք, զի ժամանակս զայս երեք, եւ կար մեր այսչափ էր, եւ օրինակս խիստ սխալ էր, եւ յօրէ յայնմանէ՛ յորմէ սկսա զգիրքս մինչեւ ի վերջին գիրն, թալան եւ փախուստն [ոչ վերագաւ ի մէջ] III (թափուած):

7.

Նոր Զուղայի Ս. Ամենափրկչի վանքի մատենադարանի ձեռ. Հ^տ 188.
Ներսիսի Ընորհալույ [եւ Յովհաննու Ծործորեցոյ] Մեկնութիւն Աւետարանի

³⁵ Սիսական, էջ 370:

³⁶ Մայր ցուցակ Վննեփիկի, Զ., սյուն 367-8:

³⁷ Մաշտոցյան Մազնեսայարան, Այլ վայրերի ձեռագրերի ժապավնների հավաքածուի Շ^տ 1240:

³⁸ Ալիշանը կասկածում է՝ արդո՞ք այս Մխիթարն է ինքը, թե՛ նույնանուն մյուսը. րևն Սիսական, էջ 370:

Մատթեոսի.

1402 թ., Սինէական վանք (Նախիչևանի գավառ), գրիչ՝ Ֆոանգ, ստացող՝ Ֆրա Մխիթարիչ Ապարաներցի:

282 թերթ, թուղթ, 22,7x12,6. երկայուն (19x6,3), բոլորգիր, 40, 41 տող. զարդարանք՝ խիստ հասարակ (13ա՝ ճակատագարդ սև թանաքով). վիճակ՝ վատ է պահպանվել:
Մեկնություն Մատթեի (Ծնորհալույ՝ 13ա-48ա, Ծործորեցույ՝ 48ա-274բ). 276ա-9բ՝ Մեկնություն Յայտնության Յովհաննու:³⁹

Հիշատակարանները.

- 275ա Փառք անեղ եւ անմահ եւ անվախճան եւ գերագոյն եւ միասնական ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ անպատ յաիտեանս յաիտէնից, ամէն: Որ արժանի արար զիս զանարժան զՖրա Ֆոանգս հասանել ի վերջին գիծ գրոյս. որպէս կարի յոյժ ուրախութիւն է նաւավարին հասանել ի նաւահանգիստ իւր, նոյնպէս եւ գրչին՝ ի յաւարտ հասանել:

Արդ, յամի մարդեղութեան Տեառն մերո եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՆԲ. (1402) թվին եւ ի թվիս Հայոց ՊՄԱ. (1402) գրեցաւ աւտուածարոյս մեկնիչս Աւետարանին Մատթեոսի, ի խնդրոյ պատուական վարդապետին ֆրա Մխիթարչի Ապարանեցոյ, ընդ ամենայն բարութեանցն եւ բազում գրեմացն ստացաւ զսա յիշատակ իւր ի սուրբ կարգս Միաբանողաց:

Արդ, աղաչեմ յիշել ի սուրբ մաղթանս ձեր զամենայն կարգաւորք վանից Ապարաներոյ՝ զկենդանիքն եւ զննչեցեալքն, նաեւ զամենայն զեղեցիկ հաւատով ժողովուրդքն որ ի մնա: Նա եւ աղաչեմ յիշել զթարի մեծ ռաբունապետն, ուսման պատճառ սուրբ կարգիս՝ զկարապետ վարդապետն, այլ եւ զբարեաց պատճառն կարգիս զՍամուէլ վերախնամողն, որ բազում աշխատեցաւ վասն կարգիս մերոյ, եւ զՄատթեոս ուշիմ վարդապետն, եւ զամենայն ննչեցեալքն յիշել աղաչեմ:

Նաեւ յայնմ ժամանակի վերախնամող ֆր[այ] Ղուկաս, որ բազում աշխատեցաւ վասն օգտութեան կարգիս՝ զնալով առ սուրբ պապն Բօնօֆացիոս եւ բազում շնորհք եւ ազատութիւն երբ կարգիս, նմանելով առաջին նախնեացն եւ աւելի վաստակեալ քան զամենեւեան. յիշիւջիք ի տէր: Դարձեալ ծանիք, զի գրեցաւ սուրբ տառս ի վանս Սինէական, ընդ հովանեաւ Սուրբ Յովանէս Մկտրչիս, ի նեղութեան եւ յաղքատութեան: Աղաչեմ յիշել Սինէականի ֆրաթնիս՝ զննչեցեալսն եւ զկենդանիք երախտաւորք մեր, այլ եւ Աստուած եւ ամենայն սուրբք եւ ձեր սուրբ աղօթք օրհնէ զՄուրատն եւ զիւր որդիքն, որ օգնական է իմ ծերութեան ի գրել բազում աշխատանօք եւ օտար աչօք. այլ եւ Առաջնաձորի⁴⁰ միաբանքն յիշեալ լիցի ի ձեզ: Եւ Աստուածն ամենակալ, որ առատն է ի տուրս բարեաց, պարգեւեցէ ամենայն երախտաւորաց մերոց կենդանեաց եւ ննչեցեղոց զկեանսն յաիտէնից, ամէն:

³⁹ Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, Կազմնց Սմբար Տէր-Աւերիսեան, Վիեննա, 1970, էջ 563-4 (№³⁹ 370):

⁴⁰ ԺԵ. Դ-ի հիշ-ք, Ա, №⁴⁰ 24. էջ 26-7. էջ 27՝ «ստաքն<աջ>որդ», նույն էջում կա նա իրականության մեջ «օտար աջք» ակնոց գործածելու մասին արձեւալոր և ընդարձակ ծանոթություն:

Նա եւ աղաչեմ յիշել զբարի ծերունին ֆրա Աստուածատուր վարդապետ մեր ուսուցիչ եւ ֆրա Գալուստն եւ զՏէր Տիրատուրն մեր երախտատուքն, եւ զծնողսն մեր յիշել աղաչեմ եւ ամենայն սղալանաց եւ խոշորութեան գրոցս անմեղադիր լերո՛ւք, զի կերակուրն ճաթբուր էր եւ ջուրս ցուրտ: Եւ այն, որ գրեացն, գրեսցէ եւ միշտ եւ հանապազ ընդ Տեառն կացցէ օգնականութեամբ եւ աղաթիւք ձերովք, ամէն:

- 48ա Զվեհիմաց ռաբունապետն զֆրա Մխիթարիչ Ապարաներեցի, ստացող գրոցս յիշեսչիք, նաեւ զնուաստ զծողս՝ զֆրա Ֆռննց (նմամ՝ 13ա՝ ճակատագարդի մէջ, 69ա, 81ա, 160ա, 172բ):

- 172բ ...զԽաչատուր վարդապետ եւ զֆրա Գեորգ եւ զֆրա Ղուկաս աշակերտք յիշեա՛լ յաղօթս:

- 228բ Ա՛խ, վա՛յ մեղաւոր Սարգիս կարդայ՛ եւ միտ ա՛ն եւ դատատանին անդի սարսիեա՛յ, զի մի՛ (մնաս որպէս) յիմար կուսանքն:

8.

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռ. Հ^տ 327.

Ժողովածու մեկնութեանց. Մակու, ՊԾԵ.-1406 թ.,
գրիչներ՝ ֆրա Գեորգ, Մխիթարիչ քհյ, ֆրա Ղուկաս,
ստացող՝ Մխիթարիչ վրդ. Գաւառեցի:

390 էջ. թուրք, 26x18x5. երկայուն, բոլորգիր, 41 տող: Բվնդ. Մեկնություններ. Վարդան վարդապետի՝ Սաղմոսաց (էջ 1ա-241ա) եւ Երզ երզոցի (էջ 241բ-284բ), Յովհան Ոսկերեւրանի՝ Եսայեայ (էջ 287ա-312բ), Յովհ. Ծործորեցու՝ Դանիէլի (էջ 313-389)⁴¹:

Հիշատակարանները.

- ա. Ֆրա Գեորգ գրչի. էջ 112ա. Զստացող այսմ հոգելից կտակի / զՄխիթարիչ վարդապետ Գաւառեցի՛ / յիշեսչիք ի Տէր բարի մտօք, / ո՛վ հանդիպողք, այժմու ներկրթութեանս վարժոցի: / Նաեւ զստառապեայ եւ զթաղծեայ ոգի զֆրա Գեորգ, գոր եւ իմովս իսկ տխելծ մատամբ զծագրեցի ի քարտիսի, աղաչեմ հառաչեմ՝ զի եւ զմեզ յիշեսչիք առ բարեգութն Յիսուս, համայն զարմիւք եւ ազգայնաւք, զի եւ դուք յիշեալ յիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ յուսոյն մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն: Այլ եւ աղաչեմ զհանդիպողդ սմին վասն խոշորութեան գրոցս անմեղադիր լինել, վասն զի այսչափ էր կար մեր:

- բ. Մխիթարիչ քհյ գրչի. էջ 285ա. Յիշեսչիք եւ զզծողս Մխիթարիչ սոսկ անուամբ քահանայ, եւ աշակերտ բանի, ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ թողութիւն հայցել մեղաց իմոց ի հեշտալուր Տեառնէն եւ ներումն սղալանացն եւ կարճոգութեան, զի ձմեռն էր, եւ մեր առաջի գիրն այս է, որ գրեցի ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ պարոն Նուրադնի, եւ ռաբունապետիս Մխիթարիչ վերակոչեցեայ, ի թուի հայկազեան սեւոի Պ. եւ ԾԵ. (1406) ամի, յամսեանն Յունվարի ի ԻԷ. օրն⁴²: Արդ, որք ընթեռնոյք կամ

⁴¹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ. Կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան. Երուսաղեմ, 1967, էջ 200-202:

⁴² ԺԵ. դ-ի հիշ-ք. Ա. Տ^տ 65, էջ 61՝ որպէս Վենետիկի Տ^տ 147 ձեռագրի հիշարակարան րպված է այս ձեռագրի միայն այս հիշարակարանի հետևյալ բաղվածքը. «...զզծողս Մխիթարիչ [յիշեցէր]: Չմեռն էր, եւ մեր

օրի[նակէք], յիշեցէ՛ք ի մեղաքարիչ յաղ[օթս] ձեր զՄխիթարիչ սպասատր բանի եւ զս-
մենայն երախտ[ատրս], զծնողս հոգե[որ] եւ մարմնա[ւոր]։ եւ Աստուած առհասարակ
ողորմեսցի ի յահագին զալստեանն իւրում՝ յիշողացոյ եւ յիշելոցոյ. ամէն։

- գ. Ֆրա Ղուկաս գրչի. էջ 389բ. Աղայեմ զպատահող այսմ աստուածային զանձիս եւ
զընթերցողսդ յիշել զիս զթարմատար ոգի ֆրա Ղուկաս ծրագրող այսմ փոքր նշանայնե-
ցի, այլ եւ մաղթեմ սղալանացն եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լինել, վասն զի ամե-
նայն արուեստատր սղալի ի գործս իւր։ Վասն Աստուծոյ սիրոյն համար մի Տէր ող՛։

Ման. ա. հիշատակարանում նշված ստացողը՝ Մխիթարիչ վ. Գավառեցի, անկաս-
կած, նույնն է, ինչ բ. հիշատակարանի Մխիթարիչ ռաբունապետը։

9.

Վենետիկի ձեռ. Հ⁴⁹ 1610/1482.

Բարթողիմէոս Մարաղացի, Քարոզգիրք.
ԺԵ. դար., տեղ՝ հավանաբար Նախիչևան,
գրիչ՝ հավանաբար և ստացող՝ ֆրա Մխիթար Ապարանցիք։

73 թերթ, թուղթ, 26x20. երկայուն (22x16. մեկը՝ 22x7,5), բոլորգիր, 38-55 տող. վաստ
պահպանված և պակասավոր օրինակ է⁴³։

10.

Երևանի Մատենադարանի ձեռ. Հ⁴⁹ 2520:

Ժողովածու մեկնութեանց։
1306 թ., գրիչ, ստացող՝ Յովհաննէս Եզընկայեցի։

345 թերթ, թուղթ, 16,8x12,5. միասյուն, բոլորգիր, 26-28 տող⁴⁴։ Պարունակում է՝ Մեկնու-
թիւնք Յովհաննու՝ Ստեփաննոս Սիւնեցի, Նանա, Անդրէաս Կապաղովկացոյ Մեկնութիւն
Յայտնութեան։

Հետագա ստացման հիշատակարանը⁴⁵.

- 344բ (ԺԵ. դ.). Օ՛վ, վեհանձնիք եւ պանծալի, / Միշտ ձեռնարկօղբ գործոց բարի; /

ստացի գիրն այս է, որ գրեցի ի զաստու Արդագոս, ի գիտս որ կոչի Մակոս, առ պարունութեան պարուն
Նորսղնի, և ռաբունապետիս Մխիթարիչ վերակոչեցեալ, ի թոյի հայկազևան սևոյի Պ. և ԾԵ. (1406)
ամի, յամենանս Յունւարի ի Ե. օրեօ։

⁴³ Մայր ցուցակ Վենետիկի, Ը. սյուն 55-62. հ. Սահակ վրդ. Ծնծնմյանը համարում է, որ այս ձեռագրի գիրը
Մխիթարիցի ձեռքով է։

⁴⁴ Ցուցակ Երևանի Հմտ. Ա., սյուն 817։

⁴⁵ Գրչության՝ 143բ և 344ա էջերի 1306 թ. հիշարկարանները տնս ԺԴ. դ-ի հիշ-բ, Հ⁴⁹ 58, էջ 43-44. այսպիսի
տպված չէ. 236ա էջի հետևյալ հիշարկարանը. «Ով ընթերցողոք րատիս և աստուածային մարգարանիս,
յիշեցիք զնղկկի գրիչս Յոհաննէս կարօտ բանի, ևս և զձեռոյսն մեր և զնորարան զհոգևորան, որ
բանիև ևն պարճառ ծնեղեան, որ ծնան զմեզ յերկն հոգևոր, և զմարմնոյն ըստ արևան փոխանոր-
դութեան և ազգակցութեան, և զայս յիշումն առաջի սիրայի և մեծ խորհրդոյն, և դուք յիշօրդ զմեզ
սեռն սրբի և կարարեալ կամօք յիշեալ յիջիք ի նոյն ի նմանէ, առ որ և զմեզ յիշարակէք հանդիսի,
որ և ի ձեզ և ի մէջ անդադար փառաբանի օրհնեալն ի բնասաւ»։

Յորժամ լսոնալ հանդիպիք այսմ տառի, / Յիշման արարէք զիս արժանի, / առ Յիսուս զթած պարգեւիչն ամենայնի, / եւ միշտ առատն ի տուրս բարի / Ջֆրա Մխիթարիչս՝ խնդրող բանի, / Զվերջին ստացող գրոցս հրաշալի, / զվժծուն տարապեալս եւ ողորմելի, / զծոյլ յամառեալս եւ հեղգալի, / զտարտամ մեռեալս մեղօք ի լի, / զկարօտս աղօթից եւ զործոց բարի, / ակն ունողիս ձերոյդ շնորհի, / կարկար ձեռօք ցանկ բաղձալի, / զի արժանաւոր հետեւողքս Քրիստոսի / ձիր ինձ շնորհէք դուք պտղալի / եւ որպէս կամիք եւ խնդրէք սիրով ի լի, / զճնոյնն պարգեւեսցէ ձեզ Փրկիչն ամենայնի⁴⁶:

11.

Վեներաբիկի ձեռ. Հ^Պ 884/1634.

Նիկողայոս Լիւրացի, Մեկնութիւն Աւետարանին Յովհաննոս⁴⁷:

ԺԵ. դար, տեղ՝ հավանաբար Նախիջևան, գրիչ՝ ֆրա Ղուկաս Ապարաներցի, ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարաներցի:

249 թերթ, թուղթ, 25,6x17,5. երկայուն (19,5x13,5. մեկը՝ 19,5x6,3), բոլորգիր, 41 տող:

Հիշատակարանները.

- 119բ *Զստացող սուրբ գրոցս զՖ[րա] Մխիթարիչ խնդրող բանի եւ տեղեալ Ապարաներցի, աղաչեմ յիշել առ Քրիստոս:*

- 167բ *Ջֆրա Ղուկաս Ապարաներցի զծօղ սորա յիշեսցիք ի Տէր բարի մտօք. Սամուր տատն յիշեսցիք ի Տէր, զի հայցէր զգրել զամուսն ի թղթիս:*

- 249ա *Յիսուս Քրիստոս, բարեխօսութեամբ ամենայն սրբոց ողորմեալ՝ զծողացս ամէն:*

ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ԱՄՓՈՓԻԶ ՊԱՏԿԵՐ

1. ԺԴ. դար - Երևանի ձեռ. Հ^Պ 6920. Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց. գրիչ՝ Ֆրա Մխիթարիչ:

2. ԺԴ. դար - Երևանի ձեռ. Հ^Պ 3938. Թովմա Աքրուհացի, Յաղագս տնօրինութեանն

⁴⁶ Լ. Խաչիկյանը (ԺԵ. դ-ի հիշ-բ, Ա. Վ^Պ 67, էջ 62) ձեռագրի հեղազա սրացող այս ֆրա Մխիթարիչին իրավացիորեն նույնացրել է Մխիթար Ապարաներցու հետ եւ նրա չափածո հիշարակարանը մասամբ (6 տող) փոխադրելով՝ փոխադրել է 1406 թ. ներքո:

⁴⁷ Մայր ցուցակ Վենետիկի, Ը. սյուն 515-8. լատիներենից թարգմանված է «*ի խնդրոյս եւ ի հարկեցուցից հրամանէ արքիսական գիտոյս եւ մեծ դիւրապետիս Տէր Զարարիայի, սպասարդին սուրբ առաքելոյն Թադէոսի*»: Այս գործի՝ 1341 թ. առաջ կարարված թարգմանութեան եւ նրա կառուցվածքի մասին փոխ Լ. Խաչիկյան, Արարագ, ԲՄ, էջ 204-6 եւ Աշխ., Բ. էջ 117-20 (իրեն հայտնի օրինակներն են՝ Երևանի Վ^Պ 6903-ը եւ 10539-ը, Երուսաղեմի Վ^Պ 789): Հմմտ. Սուրբ Գրքի հայերեն մակնությունների մարտնչագիտություն, պատրաստված Ն. Եգնիկ եպս. Պետրոսյան, Արմեն Տեր-Մարտիրոսյան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, [Երևան], 2002, էջ 123. ներկայացված է «ՄՄ 202, Ա., էջ Ե.-ԼԱ., 1-503» եւ Երուսաղեմի Վ^Պ 187 (Պոլիս, 1755 թ.) ձեռագրերով: Երկրորդը ճիշտ է, իսկ Երևանի Վ^Պ 202-ը («Ա., էջ Ե.-ԼԱ., 1-503» ցուցումներն անհասկանալի են) ամբողջական Աստվածաշունչ է եւ այդպիսի նյութ չունի (փոխ Մայր ցուցակ Երևանի, Ա. սյուն 885-9). փոխարենը այս մակնությունը կա Երևանի ԺԴ. դարի ձեռագիր Վ^Պ 5701-ում (Ցուցակ Երևանի, Հմմտ, Բ. սյուն 166-7):

Քրիստոսի, գրիչ՝ ֆրա Մխիթարիչ:

3. 1383 թ. - Երևանի Հ^ր 68. Թովմա Աքուիանցի, Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի. Նախիջևա՞ն, գրիչ՝ ֆրա Յոհաննէս, Մատթեոս Քոնեցի, [ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանեցի]:

4. 1392 թ., - Վենետիկի Հ^ր 147/1363. Ժողովածու մեկնութեանց. Արտագ գավառի Մակու գյուղ, գրիչ և ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանեցի:

5. Ժ. դար - Երևանի Հ^ր 354. Աստուածաշունչ (ամբողջական). [Մակու], գրիչ՝ Գրիգոր Ապարանեցի կամ Գաւառցի, Ղուկաս, ստացող՝ ֆրա Մխիթարիչ վրդ. (1-524), տէր Զաքարիա (525-648):

6. Ժ. դար - Վենետիկի Հ^ր 863/1000. Դատաստանագիրք լատինաց (Կանոնագիրք Է.). Ապարաներ, գրիչ, ծաղկող և ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանեցի:

7. 1402 թ. - Նոր Զուղայի Ս. Ամենափրկչի վանքի մատենադարանի Հ^ր 188. Ներսիսի Ծնորհալոյ [եւ Յովհաննու Ծործորեցոյ] Մեկնութիւն Աւետարանին Մատթեոսի. Սինեական վանք (Նախիջևանի գավառ), գրիչ՝ Ֆոանգ, ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանեցի:

8. 1406 թ. - Երուսաղէմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռ. Հ^ր 327. Ժողովածու մեկնութեանց. Մակու, գրիչ՝ ֆրա Գէորգ, Մխիթարիչ քնյ, ֆրա Ղուկաս, ստացող՝ Մխիթարիչ վրդ. Գաւառեցի:

9. Ժ. դ. - Վենետիկի Հ^ր 1610/1482. Բարթողիմէոս Մարաղացի, Քարոզգիրք. տեղ՝ հավանաբար Նախիջևան, գրիչ՝ հավանաբար, և ստացող՝ ֆրա Մխիթար Ապարանեցի:

10. Ժ. դ. - Երևան Հ^ր 2520. Ժողովածու մեկնութեանց. Մեկնութիւնք Յովհաննու՝ Ստեփաննոս Սինեցի, Նանա, Անդրէաս Կապաղովկացու Մեկնութիւն Յայտնութեան: 1306 թ., գրիչ, ստացող՝ Յովհաննէս Եղնկայեցի, հետագա ստացող՝ Մխիթարիչ Ապարանեցի (Ժ. դ.):

11. Ժ. դ. - Վենետիկի Հ^ր 884/1634. Նիկողայոս Լիւրացի, Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու. հավանաբար Նախիջևան, գրիչ՝ ֆրա Ղուկաս Ապարանեցի, ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանեցի:

Եվ որպէս ընդհանուր պատկերի ամփոփում՝ Աշեք, որ Մխիթարիչի գրած ձեռագրերի հարդարանքի համեմատությունը, տառաձևերի ամհամաչափությունը և համառոտագրությունների առատությունը ցույց են տալիս, որ նա արհեստավարժ ապրուստը գրչությանը վաստակող գրիչ չի եղել: Այս հանգամանքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ Ապարանեցու գրած մեզ հայտնի վերը թվարկված ձեռագրերից որևէ մեկը չունի առանձին պատվիրատու: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ձեռագրերի մեծ մասը շատ գործածվելուց բավական մաշված է կամ վատ պայմաններում պահպանված լինելու պատճառով վնասված է և թերի: Այս պատճառով էլ մեզ հայտնի ձեռագրերից ճշգրիտ թվական ունեն միայն 4-ը, իսկ անթվական են մնացել 7-ը, որոնցից 4-ը Ժ. դարի են, 3-ը՝ Ժ. դարի: Իսկ որոշակի թվական ունեցողները վերաբերում են 1383, 1392, 1402 և 1406 թթ.: Գրչության հայտնի վայրերն են. հավանաբար Նախիջևանի գավառ՝ 3 միավոր, Ապարաներ՝ 1, Նախիջևանի գավառի Սինեական վանք՝ 1, Մակու՝ 3:

Բովանդակության առումով բոլոր ձեռագրերն ունեն գիտական-գործնական բնույթ: Դրանք մեր հեղինակի գլխավոր երկի՝ «Գիրք տրամաբանության»-ի աղբյուրներն են, ինչը նկատվում է նաև նրա շարադրանքում բազմաթիվ մեջբերումների առկայությամբ: Այդ ձեռագրերը հետևյալներն են՝ Աստվածաշունչ (5⁴⁸), Պետրոս Արագոնացու «Գիրք առաքի-նությանց» (1), Թովմա Աքվինացու «Հասարմն աստուածաբանության» երկի երրորդ մասը՝ «Յաղագս տնօրինությանն Քրիստոսի» (2 և 3), «Դատաստանագիրք լատինաց» (6), Բարդուղիմեոս Մարադացու «Քարոզգիրք» (9), Հիմ և Նոր Կտակարանների գրքերի մեկ-նություններ՝ Վարդան Արևելցու «Երգ երգոց»-ի (4 և 8) և «Սաղմոսաց» (8), Հովհ. Ոսկեբե-րանի՝ «Եսայեայ» (8), Հովհ. Մործորեցու՝ «Դամիելի» (8), Ներսես Շնորհալու և Հովհ. Մոր-ծորեցու՝ «Մատթեոսի» (7), «Ծաղկաբաղ մեկնություն Յովհաննու» (4), Ստեփանոս Սյունե-ցու և Նանայի՝ «Յովհաննու» (10), Նիկողայոս Լյուրացու՝ «Յովհաննու» (11), Անդրեաս Կապադովկացու՝ «Յայտնության» (10):

⁴⁸ Ըստ մեր ցանկի համարների: